



ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հոդվածի հղումը. Խաչիկյան Ա., Ավագյան Գ., Վարդանյան Ք., Միրումյան Ա. (2023), ՀՀ արդյունաբերության ոլորտի զարգացման միտումները և կառուցվածքային տեղաշարժերի վերլուծությունը, Տնտեսություն և հասարակություն, ՀՊՏՀ, Տնտեսագետ, 3(3), 7-28, DOI: 10.52174/29538114_2023.3-7


Ներկայացվել է խմբագրություն՝ 23.10.2023 թ.

Ուղարկվել է գրախոսության՝ 24.10.2023 թ.

Երաշխավորվել է հրատարակման՝ 25.12.2023 թ.


ՍՈՍ ԽԱԶԻԿՅԱՆ

ՀՊՏՀ մակրոէկոնոմիկայի ամբիոնի վարիչ,
 րնտեսագիտության թեկնածու, դոցենտ

 <https://orcid.org/0000-0002-9269-5588>


ԳԱՅԱՆԵ ԱՎԱԳՅԱՆ

ՀՊՏՀ մակրոէկոնոմիկայի ամբիոնի դոցենտ,
 րնտեսագիտության թեկնածու

 <https://orcid.org/0000-0003-3395-2473>


ՔՆԱՐԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀՊՏՀ մակրոէկոնոմիկայի ամբիոնի դոցենտ,
 րնտեսագիտության թեկնածու

 <https://orcid.org/0000-0002-7198-3740>

ԱԻԴԱ ՄԻՐՈՒՄՅԱՆ

ՀՊՏՀ մակրոէկոնոմիկայի ամբիոնի ասպիրանտ

 <https://orcid.org/0000-0002-4962-5795>

ՀՀ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՂԱՇԱՐՄԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Արդյունաբերությունը րնտեսության առաջատարն է, որոշիչը և դրա զարգացմամբ է բնորոշվում որևէ երկրի զարգացման մակարդակը: Արդյունաբերության ոլորտի գերակայությունը պայմանավորված է րնտեսական համակարգի կենսագործունեության, րնտեսական զարգացման, երկրի պաշտպանունակության, րնտեսական անվտանգության ապահովման գործում ոլորտի ունեցած դերակատարությամբ: ՀՀ արդյունաբերության ոլորտի 2010–2022 թթ. զարգացման միտումների և կառուցվածքային տեղաշարժերի ուսումնասիրությունը հատկապես կարևորվում է րնտեսական և քաղաքական առումով առանձնահատուկ այս ժամանակահատվածում: Հոդվածում ուսումնասիրվել է հատկապես վերջին տասնամյակում ՀՀ արդյունաբերության ոլորտի ցուցանիշների շարժընթացը, բացահայտվել են ոլորտի կառուցվածքա-

յին փոփոխությունները պայմանավորող գործոնները և ցածր տնտեսական արդյունավետության պատճառները: Կատարվել է արդյունաբերական արտադրանքի ցուցանիշների շարժընթացի վերլուծություն՝ ըստ ցուցանիշների վրա ազդող արտաքին և ներքին գործոնների: Սա հնարավորություն է ընձեռել բացահայտելու հիմնական խնդիրները և որակապես գնահատելու ոլորտի ներկա վիճակը:

Աշխատանքի կարևոր բաղկացուցիչ մաս է կազմում նաև ներդրումային դաշտի վերաբերյալ ընդհանրական ուսումնասիրությունը արդյունաբերության ոլորտում, որի արդյունքում բացահայտվել են որոշակի առանձնահատկություններ: Ներդրումային առանձնահատկությունների ու ոլորտի զարգացման փոխկապվածությունը հիմք է տալիս կատարելու մի շարք եզրահանգումներ ՀՀ արդյունաբերության ոլորտի արտադրողականության բարձրացման վերաբերյալ:

Ուսումնասիրության շրջանակում անդրադարձ է կատարվել կայուն զարգացման հիմնահարցերին այնքանով, որքանով թեման վերաբերում է էլեկտրաէներգիայի արտադրության ծավալների աճին ու բնապահպանական ոլորտին:

Ընդհանուր առմամբ, փորձ է կատարվել ՀՀ արդյունաբերության ոլորտի կառուցվածքային տեղաշարժերի մասին ներկայացնելու համապարփակ վերլուծություն, որը հետազոտողներին հնարավորություն կտա արագ կողմնորոշվելու հիմնական ուղղությունների շրջանակում:

Հիմնաբառեր. արտադրողականություն, կառուցվածքային տեղաշարժ, հանքարդյունաբերություն, մշակող արդյունաբերություն

JEL: L16, L72

DOI: 10.52174/29538114_2023.3-7

Ներածություն: ՀՀ-ում ավանդաբար տնտեսության հիմք համարվող արդյունաբերությունը ժամանակի ընթացքում փոփոխվել է, ինչն արտացոլվում է ոլորտի կառուցվածքում, տարածքային բաշխման և կազմակերպման մեջ: Թեև վերջին 3-4 տարիներին ոլորտում որոշ դրական տեղաշարժեր կան, սակայն կտրուկ առաջընթաց ապահովել դեռևս չի հաջողվել: Դա պայմանավորված է արդյունաբերության կառուցվածքային և որակական անբարենպաստ փոփոխություններով՝ կապված արդյունաբերության բազմազանեցման անկմամբ, մեծ ավելացված արժեք ստեղծող արդյունաբերական արտադրությունների կրճատմամբ, արդյունաբերության ավելացված արժեքի մեջ բարձրտեխնոլոգիական արտադրանքի փոքր տեսակարար կշռով:

Հոդվածը նպատակ ունի ՀՀ արդյունաբերության ցուցանիշների համակողմանի վերլուծության հիման վրա բացահայտելու հատկապես վերջին տասնամյակում ոլորտի զարգացման միտումները, արդյունաբերության կառուցվածքային առանձնահատկությունները: Այս առումով կարևորվում են ՀՀ արդյունաբերության ոլորտի զարգացման խոչընդոտների բացահայտումը, դրանք հաղթահարելու հնարավոր տարբերակների առաջարկումը, տնտեսական անվտանգության շրջանակում արդիականացման հնարավորությունների մատնանշումը:

Արդյունաբերությունը ՀՀ տնտեսության հիմնասյուններից է: 2012–2022 թթ. ժամանակահատվածում արդյունաբերության մասնաբաժինը ՀՆԱ-ում տատանվել է 16–20%-ի միջակայքում՝ 2022 թ. կազմելով 18.8%¹:

¹ Հաշվարկների աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի կայքէջ, <https://www.armstat.am/am/?nid=202>

2012–2019 թթ. արդյունաբերության ճյուղի աճի տեմպը միջինում կազմել է 6.6%, սակայն 2020 թ., պայմանավորված COVID-19-ի և Արցախյան 44-օրյա պատերազմի հարուցած ճգնաժամով, արդյունաբերական արտադրանքի ծավալի աճի տեմպը դանդաղել է՝ նախորդ տարվա նկատմամբ աճելով ընդամենը 0.6%-ով, որը մեծապես պայմանավորված էր մշակող արդյունաբերության անկմամբ: 2021 թվականից այն աստիճանաբար վերականգնվել է, ընդ որում, 2022 թ., նախորդ տարվա համեմատությամբ, մետաղական հանքաքարի արդյունահանման 4.7% անկում է գրանցվել, և առավել մեծ ապահովել են հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման այլ ճյուղեր՝ 46.1%, իսկ մշակող արդյունաբերության աճը կազմել է 13.5%²: Դիտարկվող ժամանակահատվածում մշակող արդյունաբերության կառուցվածքում գերակշռել է սննդամթերքի, խմիչքի, հիմնային մետաղների արտադրությունը, որոնք, հիմնականում, գյուղատնտեսական հումքի և բնական ռեսուրսների պարզ օգտագործման վրա հիմնված գործունեության ոչ բարդ տեսակներ են:

Արդյունաբերությունը 2006–2013 թթ. միջինում կլանել է ներդրումների 43.2%-ը, իսկ 2014–2021 թթ.՝ մոտ 52%-ը, որոնք առավելապես ուղղվել են հումքի արդյունահանման և վերամշակման ոլորտ: Փաստորեն, արդյունաբերության ոլորտում կատարված ներդրումներն արդյունավետորեն չեն օգտագործվել և բավարար ավելացված արժեք չեն ստեղծել:

Գրականության ակնարկ: Մասնագիտական գրականության մեջ և հարթակներում ՀՀ արդյունաբերության կառուցվածքային փոփոխությունների վերաբերյալ առկա են տարբեր վերլուծություններ: Բազմաթիվ հեղինակներ անդրադարձել են վերջին տասնամյակում ՀՀ արդյունաբերության բնագավառում արձանագրված փոփոխություններին, սակայն դրանց պատճառներին, առավել ևս ընդունելի կառուցվածքին վերաբերող հետազոտությունները խիստ սակավաթիվ են: Ա. Թևիկյանն իր հոդվածում³ մանրամասն նկարագրել է ՀՀ արդյունաբերության տեղն ու դերը տնտեսությունում, ներկայացրել արդյունաբերության կառուցվածքային փոփոխությունները և եզրակացրել, որ երկարաժամկետ ազգային խնդիրների լուծման տեսանկյունից կարևոր է բարձրտեխնոլոգիական ռազմարդյունաբերության համալիրի արագ տեմպերով զարգացումը: Ա. Սաֆարյանը «Ժամանակակից Հայաստանի արդյունաբերական քաղաքականության մասին» հետազոտության մեջ⁴, վերլուծելով ՀՀ արդյունաբերության կառուցվածքն ու դրա փոփոխությունները, կարևոր է համարում որոշելը, թե որ տեխնոլոգիական էկոհամակարգում պետք է զարգանա Հայաստանը և, ըստ այդմ՝ ռազմական արդյունաբերության և գիտատեխնիկական նորամուծական արտադրության ոլորտները համարում է հետագա զարգացման տնտեսական հիմքը: Ըստ հեղինակի՝ տնտեսական աճի արագացում կարելի է ապահովել միայն գիտատար և արտաքին շուկաներում մրցունակ նորամուծական արտադրական կազմա-

² Տե՛ս ՀՀ վիճակագրական տվյալների բազա, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2022 թ. հունվար-դեկտեմբերին, էջ 10-12, <https://armstat.am/am/?nid=82&id=2547>

³ Տե՛ս **Тевикян А.**, Промышленное производство Армении, <https://rb.gy/sg1vl>

⁴ Տե՛ս **Сафарян А.**, О промышленной политике современной Армении, 2019, <https://armenpress.am/rus/news/985763.html>

կերպությունների շնորհիվ, որոնք պետք է մասամբ վերահսկվեն պետության կողմից:

Հետազոտություններից մեկում⁵ ՀՀ արդյունաբերության կառուցվածքային փոփոխությունները դիտարկվում են ըստ երեք հատվածների՝ մշակող արդյունաբերություն, հումքային հատված և էներգետիկ ռեսուրսներ, ինչպես նաև կոմունալ ծառայությունների արտադրության և բաշխման հատված: Հեղինակները եզրակացնում են, որ հումքային հատվածում առկա են սեզոնային պարբերաշրջաններ, 1998–2005 թթ. ուժեղ կոռեյացիոն կապ կա հումքային ոլորտի և ողջ արդյունաբերության աճի միջև, սակայն հետագայում այդ հատվածի աճի տեմպերը նվազել են, իսկ բաժինը արդյունաբերության մեջ իջել է: Միաժամանակ, ոչ հումքային մշակող արդյունաբերության բաժինն աստիճանաբար ավելացել է՝ շնորհիվ սննդի և թեթև արդյունաբերության բաժինների ավելացման: Ա. Պետրոսյանն իր հոդվածում⁶ վերլուծել է ՀՀ արդյունաբերության կառուցվածքային փոփոխությունները ԵԱՏՄ-ին անդամակցելուց հետո: Սոցիալ-տնտեսական ուսումնասիրությունների հայկական կենտրոնի՝ ACSES-ի վերլուծաբանները ներկայացրել են ՀՀ արդյունաբերության կառուցվածքը վերջին տարիներին՝ ընդհուպ 2023 թ. առաջին կիսամյակը, հետազոտել են ՀՀ տնտեսության արդյունաբերական և ոչ արդյունաբերական հատվածների հարաբերակցության փոփոխության և արդյունաբերության ենթաոլորտների կառուցվածքային փոփոխությունների պատճառները⁷: 2019–2020 թթ. ՀՀ արդյունաբերության զարգացման ուղղություններին և կառուցվածքային փոփոխություններին նվիրված մեկ այլ հետազոտության մեջ⁸ ներկայացվում են արդյունաբերության ենթաոլորտների աճի տեմպերի տարբերություններն ու դրանցով պայմանավորված կառուցվածքային փոփոխությունները: Հետազոտողներն արձանագրված ցուցանիշները և դրանց դինամիկան դիտարկել են COVID-19-ի՝ տնտեսության վրա ունեցած ազդեցությամբ:

Արդյունաբերության կառուցվածքի փոփոխություններին անդրադարձ կա նաև «ՀՀ տնտեսության սոցիալ-տնտեսական զարգացումները 2023 թվականի հունվար-ապրիլ ամիսներին» վերտառությամբ հոդվածում⁹, որում հետազոտողներն արձանագրում են հանքարդյունաբերության ոլորտի անկման միտումը ուսումնասիրվող ժամանակահատվածում:

Հետազոտության մեթոդաբանություն: Հայկական և արտասահմանյան հեղինակների գիտական հրապարակումները, ՀՀ վիճակագրական կոմիտեի,

⁵ Տե՛ս Сырьевые и несырьевые отрасли Армении: промышленность, экспорт, ВВП. <https://www.kavkaz-uzel.eu/blogs/83781/posts/34748>

⁶ Տե՛ս Динамика структуры промышленности республики Армения в контексте членства в ЕАЭС, <https://rep.bntu.by/bitstream/handle/data/75461/230-232.pdf?sequence=1&isAllowed=y>

⁷ Տե՛ս Սոցիալ-տնտեսական ուսումնասիրությունների հայկական կենտրոնի կայքէջ, Հայաստանի արդյունաբերության «ստագնացիայի» դիագնոստիկան, 2023 թ., <https://www.acses.am/ardyunaberuty-an-stagnacian/>

⁸ Տե՛ս Արդյունաբերության զարգացմանն ուղղված ՀՀ Կառավարության գործունեության ուսումնասիրություն, «Լոյս հիմնադրամ», Եր., 2020, https://www.luys.am/img/artpic/small/83d7cdc8b40dde93a521analysis_of_industrial_policy.pdf

⁹ Տե՛ս ՀՀ տնտեսության սոցիալ-տնտեսական զարգացումները 2023 թվականի հունվար-ապրիլ ամիսներին, «Լոյս հիմնադրամ», Եր., 2023, <https://www.luys.am/img/artpic/small/8e8a225f3e76ee191b1a04-%D5%8F%D4%B1%D5%91.pdf>

ՀՀ Կառավարության, ՀՀ էկոնոմիկայի նախարարության հրապարակած վիճակագրական տեղեկագրերը, տարեգրքերը, տվյալների շտեմարանները, միջազգային տարբեր կազմակերպությունների հաշվետվությունները որպես տեսական և տեղեկատվական հիմք են ծառայել հետազոտության համար:

Հետազոտության ընթացքում հիմք է ընդունվել ՄԱԿ-ի միջազգային ստանդարտ ճյուղային դասակարգմանը¹⁰ համապատասխանող Արդյունաբերության ոլորտում ըստ ՀՀ տնտեսական գործունեության տեսակների դասակարգչը, ըստ որի առանձնացվում են գործունեության հետևյալ խոշոր ենթա-ոլորտները.

- *Բաժին B* - հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում. ներառվում է քարածխի և գորշ ածխի, անձակ նավթի, բնական գազի, ինչպես նաև մետաղական հանքաքարի արդյունահանումը:
- *Բաժին C* - մշակող արդյունաբերություն. ընդգրկում է ՀՀ արտահանման մեջ նշանակալի սննդամթերքի, խմիչքի և ծխախոտային արտադրատեսակների, ինչպես նաև մանածագործական, հագուստի, կաշվե արտադրատեսակների արտադրությունը: Այս բաժնում են ներառված նաև քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների, դեղագործական արտադրանքի, հիմնական մետաղների, մետաղե արտադրատեսակների արտադրությունը, արդյունաբերության ավելի փոքր մաս կազմող համակարգիչների, էլեկտրոնային և օպտիկական սարքավորանքի, էլեկտրական սարքավորանքի, մեքենաների արտադրությունը, կահույքի արտադրությունը:
- *Բաժին D* - էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում. ներառում է էլեկտրականության և գազի արտադրություն ու բաշխում, ինչպես նաև գոլորշու և լավորակ օդի մատակարարում:
- *Բաժին E* - ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում. ընդգրկում է ջրի և թափոնների հավաքում ու մշակում, ջրի բաշխում, թափոնների վնասագերծում և ոչնչացում¹¹:

Հավաքագրվել և մշակվել է ՀՀ արդյունաբերության ոլորտը բնութագրող տեղեկատվական բազա, վերլուծության են ենթարկվել ՀՀ տնտեսության կառուցվածքային առանձնահատկություններին վերաբերող ցուցանիշներ:

Վիճակագրական մեթոդներն օգտագործվել են ընդհանուր տվյալների մշակման, ձևափոխման և դրանց միջոցով ցուցանիշների միջև կապերի ու փոխազդեցությունների բացահայտման նպատակով:

Համեմատական մեթոդի կիրառմամբ դիտարկվել են ենթաոլորտների արտադրության և արտահանման աճի տեմպերի տարբերությունները ուսումնասիրված ժամանակաշրջանում:


Գրաֆիկական մեթոդի կիրառմամբ ուսումնասիրված տվյալները ներկայացվել են տարբեր աղյուսակների և գծապատկերների տեսքով. ցուցանիշնե-

¹⁰ Տե՛ս The International Standard Industrial Classification of All Economic Activities (ISIC), Rev.4, Statistical Papers, Series M No. 4/Rev.4, United Nations, New York, 2008, <https://unstats.un.org/unsd/publications/catalogue?selectID=396>

¹¹ Առավել մանրամասն տե՛ս ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2013 թ. սեպտեմբերի 19-ի N 874-Ն հրաման, հավելված:

րի շարժը ցույց տալու համար օգտագործվել են հիմնականում գծային գրաֆիկներ: Հետազոտության ընթացքում օգտագործվել է դինամիկ վերլուծության մեթոդը, որը հնարավորություն է տվել ուսումնասիրելու երևույթների վարքագծային փոփոխությունները ժամանակի մեջ՝ տարբեր իրադարձությունների ազդեցությամբ: Դա օգնել է բացահայտել, թե ժամանակի ընթացքում ուսումնասիրվող ցուցանիշները ինչ վարքագիծ են դրսևորել՝ ի պատասխան էական գործոնների փոփոխությունների: Հետազոտության ընթացքում օգտագործվել է նաև գիտական վերացարկման մեթոդը: Արդյունքում՝ առանձնացվել և ուսումնասիրվել են այն ցուցանիշները, որոնք հնարավորություն են տվել առավել արդյունավետ կերպով գնահատելու հիմնախնդրի ներկա վիճակն ու զարգացումները:

Վերլուծություն: Արդյունաբերությունը ՀՀ տնտեսության իրական հատվածի ոլորտային հենասյուն է: 2010–2022 թթ. ժամանակահատվածում արդյունաբերության մասնաբաժինը ՀՆԱ-ում տատանվել է 15-20%-ի միջակայքում՝ 2022 թ. կազմելով 18.5%: 2023 թ. առաջին կիսամյակում այդ ցուցանիշը 17.2% է¹²:




Գծապատկեր 1. ՀՀ ՀՆԱ կառուցվածքն ըստ տնտեսության հատվածների 2010–2023 թթ.¹³

Վիճակագրական տվյալները փաստում են, որ տնտեսության առաջնային և երկրորդային հատվածները չունեն ընդգծված գերակշռություն. 2010–2016 թթ. առաջնային հատվածի կշիռը, միջին հաշվով, կազմել է 20.4%, իսկ 2017–2022 թթ. կրճատվել է՝ կազմելով միջինում 16%, մինչդեռ երկրորդային հատվածի մասնաբաժինը կազմել է համապատասխանաբար՝ 25.5% և 21.9%: Թե՛ առաջնային, թե՛ երկրորդային հատվածների մասնաբաժինների կրճատման հաշվին շարունակաբար աճում է տնտեսության երրորդային հատվածի՝ ծառայությունների մասնաբաժինը:

Դիտարկվող ժամանակահատվածում արդյունաբերության ոլորտը շարունակական աճ է գրանցել, սակայն փոփոխվել են դրա մասնաբաժինը ՀՀ ՀՆԱ-ում և տնտեսական աճին նպաստման չափը: Ինչպես տեսնում ենք,

¹² Տե՛ս ՀՀ ՎԿ կայքէջ, Վիճակագրական տվյալների բազաներ:
¹³ Տե՛ս ՀՀ ՎԿ կայքէջ, Վիճակագրական տվյալների բազաներ: Հաշվարկները կատարել են հեղինակները: Երեք հատվածների գումարը 100% չի կազմում, քանի որ ներառված չէ գուտ հարկերի կշիռը:

արդյունաբերության ոլորտը առավել մեծ չափով դրական նպաստում ունեցել է հատկապես 2016–2019 թթ:



Գծապատկեր 2. ՀՀ ՀՆԱ կառուցվածքը (%) և տնտեսական աճին տնտեսության ճյուղերի նպաստումները (տ.կ.), 2010–2023 թթ.¹⁴

Արդյունաբերական արտադրանքի ծավալները, հիմնականում, աճի միտում են ունեցել, և կառուցվածքում մշտապես գերակշռել է մշակող արդյունաբերության արդյունաբերական արտադրանքը: 2021 թ. արդյունաբերության ոլորտի աճի տեմպերը նախորդ տարվա նկատմամբ արագացել են. աճը հիմնականում տեղի է ունեցել ի հաշիվ հանքագործական և մշակող արդյունաբերության աճի վերականգնման: Սակայն 2022 թ. ընդհանուր արդյունաբերական արտադրանքի 10.9% աճը պայմանավորված է հանքարդյունաբերության ճյուղից բացի արդյունաբերության մյուս ճյուղերի կտրուկ աճով, որոնցից ամենամեծ դրական նպաստումն ունեցել է մշակող արդյունաբերությունը՝ 11.7%: 2023 թ. առաջին կիսամյակում արդյունաբերության ճյուղի 1% աճին դրական նպաստում է ունեցել մշակող արդյունաբերության ճյուղը՝ 2.6 տոկոսային կետ, իսկ հանքագործական արդյունաբերության բացասական նպաստումը աճին կազմել է 1.7 տոկոսային կետ:


Ինչ վերաբերում է 2023 թ. հունվար-հուլիս ամիսներին գրանցված արդյունքներին, ապա նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի նկատմամբ 0.5% աճն առավելապես պայմանավորված է մշակող արդյունաբերությամբ, մինչդեռ հանքարդյունաբերության արդյունաբերական արտադրանքի արտադրությունը կրճատվել է 5.9%-ով¹⁵:

Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքում 2017–2022 թթ. ամենամեծ տեսակարար կշիռը բաժին է ընկում Երևանին՝ միջինում 36.1%, որին


¹⁴ Տե՛ս ՀՀ ՎԿ կայքէջ, Վիճակագրական տվյալների բազաներ: Հաշվարկները կատարել են հեղինակները:

¹⁵ Տե՛ս ՀՀ ՎԿ կայքէջ, Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը 2023 թվականի հունվար-հուլիսին, էջ 29-31:

հաջորդում են Սյունիքի, Արարատի և Կոտայքի մարզերը, համապատասխանաբար՝ 18.0%, 12.6% և 10.9%:



Գծապատկեր 3. Արդյունաբերական արտադրանքի ծավալի և կառուցվածքի շարժընթացները 2010–2022 թթ.¹⁶



Գծապատկեր 4. Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքը Երևանում և մարզերում 2017–2022 թթ., %¹⁷

Արդյունաբերության արտադրանքի մեջ Սյունիքի մարզի զգալի տեսակարար կշիռը պայմանավորված է *հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում* ճյուղերի մեծ մասնաբաժնով, որը 2021 թ-ին ապահովել է մարզի արդյունաբերական արտադրանքի 86.3%-ը: Արարատի մարզում արդյունաբերական արտադրանքի հիմնական մասն ապահովել է մշակող արդյունաբերությունը. 2021 թ.՝ մարզի արդյունաբերական արտադրանքի 93.9%-ը, իսկ վերջինիս մեջ բավականին մեծ տեսակարար կշիռ է


¹⁶ Տե՛ս ՀՀ ՎԿ կայքէջ, Վիճակագրություն, տվյալների բազա, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2022 թվականի հունվար-դեկտեմբերին, էջ 11-13:

¹⁷ Տե՛ս ՀՀ ՎԿ կայքէջ, Հայաստանի վիճակագրական տարեգիրք - 2022, էջ 321: ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2022 թվականի հունվար-դեկտեմբերին, էջ 18:

կազմել ծխախոտի արտադրությունը¹⁸: Մյուս կողմից՝ ըստ առանձին ճյուղերի դիտարկման՝ կարող ենք ընդգծել, որ *հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում* ճյուղի արդյունաբերական արտադրանքի կառուցվածքում մեծ կշիռ ունի նաև Լոռու մարզը՝ 60.7%, այնուհետև Գեղարքունիքի մարզը՝ 24.1%: Մշակող արդյունաբերության ճյուղում Սյունիքի մարզն ունի ամենափոքր մասնակցությունը. 2021 թ.՝ 7.3%:

Հանքարդյունաբերության կշիռը ՀՀ-ում, միջին հաշվով, կազմել է 3% (2010–2022 թթ.), իսկ արդյունաբերության մեջ հանքարդյունաբերության կշիռը 2010–2022 թթ.՝ 16.9%:

Հանքարդյունաբերության միջազգային խորհրդի զեկույցի համաձայն՝ հանքարդյունաբերության նպաստման համաթվով (Mining Contribution Index-MCI) 2022 թ. Հայաստանը 183 երկրների շարքում 23-րդն էր¹⁹. Նախորդ զեկույցի վարկանիշի համեմատությամբ բարձրացել է 3 հորիզոնականով (2020 թ.՝ 26-րդ հորիզոնական)²⁰: Ինչպես զեկույցում է նշվում, այս վարկանիշում առաջխաղացումը հաջողության չափանիշ չէ:



Գծապատկեր 5. Պղնձի համաշխարհային գին, հանքահումքային արտադրանքի արտահանման և իրական արդյունավետ փոխարժեքի շարժընթացը (աճը նախորդ տարվա նկատմամբ)²¹

Հանքարդյունաբերության ծավալները 2010–2023 թթ. ընթացքում աստիճանաբար աճել են՝ արձագանքելով միջազգային պահանջարկին և հումքային ապրանքների գներին: ՀՀ-ից հիմնական արդյունահանվող և արտահանվող մետաղներն են պղինձը, մոլիբդենը և ոսկին:


¹⁸ Տե՛ս ՀՀ ՎԿ կայքէջ, Հայաստանի վիճակագրական տարեգիրք - 2022, էջ 322-324:

¹⁹ Տե՛ս International Council on Mining and Metals, Role of Mining in National Economies, Mining Contribution Index (MCI), 6th Edition, December 2022, էջ 5-10, https://www.icmm.com/website/publications/pdfs/social-performance/2022/research_mci-6-ed.pdf?cb=16134

²⁰ Տե՛ս International Council on Mining and Metals, Role of Mining in National Economies, Mining Contribution Index 2020, 5th Edition, էջ 4-8, https://www.icmm.com/website/publications/pdfs/social-performance/2020/research_mci-5.pdf


²¹ Տե՛ս ՀՀ ՎԿ արտաքին տվյալների բազա (ըստ ապրանքային անվանացուցակի 4-նիշ դասակարգման) 2006–2022 թթ., Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության հնգանիշ դասակարգման, հունվար-դեկտեմբեր, 2006–2022 թթ., Համաշխարհային բանկ, Ապրանքային շուկաներ, Ապրանքների գներ, <https://www.worldbank.org/en/research/commodity-markets>

Ներկայացված վիճակագրական տվյալները փաստում են, որ արտահանման փոփոխությունները մեծապես պայմանավորվել են պղնձի համաշխարհային գների տատանումներով:



Գծապատկեր 6. Մոլիբդենի համաշխարհային գնի և արտահանման շարժընթացը (աճը նախորդ տարվա նկատմամբ), %²²

2015 թ-ից մոլիբդենի գինն աստիճանաբար սկսեց վերականգնվել՝ 2021 թ. նույնիսկ գերազանցելով նախկին արժեքները: 2021 թ. մոլիբդենի արտահանման հիմնական ուղղություններն են եղել Չինաստանը, Շվեյցարիան, Միացյալ Թագավորությունը և Նիդեռլանդները²³:



Գծապատկեր 7. Ոսկու համաշխարհային գնի և արտահանման շարժընթացը (աճը նախորդ տարվա նկատմամբ)²⁴, %

²² Տե՛ս ՀՀ ՎԿ արտաքին տվյալների բազա (ըստ ապրանքային անվանացուցակի 4-նիշ դասակարգման), Արժույթի միջազգային հիմնադրամ, հումքային ապրանքների գներ, տարեկան տվյալներ, <https://www.imf.org/en/Research/commodity-prices>

²³ Տե՛ս ՀՀ ՊԵԿ-ի կայքէջ, Մետաղական օգտակար հանածոյի արտահանման թույլտվություն ստացած ընդերքօգտագործող հարկ վճարողների արտահանած ապրանքների ցանկ, 2021, <https://www.petekamutner.am/Content.aspx?itn=tsTILists>

²⁴ Տե՛ս ՀՀ ՎԿ արտաքին տվյալների բազա (ըստ ապրանքային անվանացուցակի 4-նիշ դասակարգման), Համաշխարհային բանկ, Ապրանքային շուկաներ, Ապրանքների գներ, <https://www.worldbank.org/en/research/commodity-markets>

«Արտահանման կառուցվածքում, պղնձից և մոլիբդենից բացի, էական նշանակություն ունի ոսկին, որն արտահանվում է անմշակ կամ կիսամշակ՝ գլխավորապես «Դորե» համաձուլվածքի՝ ձուլակտորի տեսքով, հիմնականում՝ Հնդկաստան: Դա արտահանվող ամենամեծ մաքսային արժեք ունեցող ապրանքների ցանկում երկրորդն է (2022 թ.)՝ զիջելով միայն պղնձի խտանյութին. 2022 թ. պղնձի խտանյութի արտահանման մաքսային արժեքը 663 մլն ԱՄՆ դոլար էր, ոսկունը՝ 414 մլն ԱՄՆ դոլար:

2022 թ. գրանցվել է արտահանման կտրուկ աճ, սակայն անհրաժեշտ է նշել նաև, որ նույն թվականին աննախադեպ մեծ ծավալով ներմուծում է իրականացվել. ոսկու ներմուծման ֆիզիկական ծավալը 2021 թ. ցուցանիշը գերազանցել է շուրջ 129 անգամ: Սա կարող է վկայել վերաարտահանման մասին՝ հաշվի առնելով նաև Սոթքի հանքավայրի խափանված աշխատանքը²⁵:

Աղյուսակ 1

1000 խոշոր հարկատուների ցանկում ընդգրկված հանքարդյունաբերող տնտեսավարող սուբյեկտները²⁶

Հ/Հ	Իրավաբանական անձի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ, նույնիսկ անուն-ազգանունը	2022 թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին հարկ վճարողների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը (հազ. դրամ)					
		Ընդամենը մուտքեր	Այդ թվում				
	շահույթահարկ		եկամտային հարկ	ԱԱՀ	ակցիզային հարկ	այլ հարկեր և վճարներ	
1	«Ձանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ»	143,933,308	33,951,050	8,689,196	3,164,806	34,670	98,093,586
5	«Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ»	19,588,908	1,697,398	1,320,746	678,659	14,997	15,877,108
14	«Թեղուտ»	12,350,963	383,270	1,217,019	1,066,527	2,142	9,682,004
19	«Լեռնամետալուրգիայի ինստիտուտ»	9,385,850	270,701	322,786	5,144	-	8,787,219
37	«Չաարատ կապան»	5,986,968	1,345,298	1,315,323	126,672	30,592	3,169,083
63	«Լիճքվազ»	4,371,015	927,457	127,122	980,786	-	2,335,650
75	«Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ»	3,761,396	511,006	349,087	44,101	-	2,857,203
86	«Գեոպրոմայնիզ գոլդ»	3,201,130	1,540,675	2,814,764	1,050,533	63,615	(2,268,457)
413	«Մաքուր երկաթի գործարան»	656,633	(508,203)	388,308	684,245	-	92,282
681	«Արմենիան Մայնինգ Քոնթրաքթոր»	402,715	84,878	205,236	94,836	-	17,765

Մետաղական հանքարդյունաբերության ոլորտի մի շարք ընկերություններ ներառված են Հայաստանի առաջին 1000 խոշոր հարկատուների ցանկում: Ցանկում ընդգրկված են նաև այնպիսի ընկերություններ, որոնք թեև


²⁵ Տե՛ս ՀՀ ՎԿ արտաքին տվյալների բազա (ըստ ապրանքային անվանացուցակի 4-նիշ դասակարգման):
²⁶ ՀՀ ՊԵԿ-ի կայքէջ, Հարկ վճարողների վերաբերյալ տեղեկատվական ցանկեր, <https://www.petekamutner.am/Content.aspx?itn=tsTILists>

չեն համարվում հանքարդյունահանողներ, սակայն զբաղվում են մշակող արդյունաբերությամբ՝ վերամշակելով հանքերից ստացվող հումքը:

Հանքարդյունաբերության ոլորտը, բացի այն դրական ազդեցություններից, որ թողնում է տնտեսության վրա արտահանումից ստացվող եկամուտների, պետական բյուջե վճարվող հարկերի և զբաղվածության ապահովման տեսքով, ունի նաև բացասական կողմնակի ազդեցություն, որը հիմնականում արտահայտվում է գործունեության հետևանքով առաջացած բնապահպանական խնդիրներով:

Համաշխարհային բանկի սահմանման²⁷ համաձայն՝ հանքային ոլորտը կայուն է համարվում, եթե դրա առաջացրած բնապահպանական ներգործությունը կառավարվում է պատշաճ, և աշխատանքների հետևանքով առաջացող աղտոտումը դուրս չի գալիս տեղամասի սահմաններից:

Մշակող արդյունաբերության կառուցվածքում ամենամեծ կշիռն ունեցողը սննդամթերքի արտադրությունն է:




Գծապատկեր 8. Մշակող արդյունաբերության կառուցվածքը 2010–2022 թթ, %²⁸

Արտահանման կառուցվածքում պատմականորեն զգալի կշիռ է ունեցել 6 ապրանքախումբ՝ «հանքահումքային արտադրանք», «պատրաստի սննդի արտադրանք», «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր և մետաղներ», «ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր», «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտային միջոցներ», «մեքենաներ, սարքավորումներ, մեխանիզմներ»:


²⁷ Տե՛ս Հանքարդյունաբերության ոլորտի կայունության ռազմավարական գնահատում. Հայաստան, Համաշխարհային բանկի կայքէջ, ապրիլ, 2016, էջ 108-109, https://www.eiti.am/file_manager/Useful%20materials/StrategicArm.pdf

²⁸ Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք - 2015, էջ 252-254: Հայաստանի վիճակագրական տարեգիրք - 2016, էջ 255-257: Հայաստանի վիճակագրական տարեգիրք - 2020, էջ 295-297: Հայաստանի վիճակագրական տարեգիրք - 2022, էջ 310-312: Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2022 թվականի հունվար-դեկտեմբերին, էջ 11-12: Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2023 թվականի հունվար-հուլիսին, էջ 29:



Գծապատկեր 9. Հիմնական ապրանքախմբերի գծով արտահանման ծավալները 2010–2023 թթ., մլն ԱՄՆ դոլար²⁹

Արտահանման և ներմուծման ծավալների շարժընթացների համալիր դիտարկմամբ կարող ենք փաստել նշված ապրանքախմբերի գծով 2022–2023 թթ. վերաարտահանման մեծ ծավալների մասին:




Գծապատկեր 10. Հիմնական ապրանքախմբերի գծով ներմուծման ծավալները 2010–2023 թթ., մլն ԱՄՆ դոլար³⁰

Հատկապես ուշագրավ են էլեկտրական սարքավորումների արտահանման և ներմուծման ծավալների շարժընթացի կտրուկ փոփոխությունները 2021–2022 թթ.:

²⁹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը հունվար-դեկտեմբերին, 2011-2022: Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը հունվար-հուլիսին, 2021-2023:

³⁰ Տե՛ս նույն աղբյուրը:




Գծապատկեր 11. Արդյունաբերության D և E ենթաոլորտների արտադրության ծավալների շարժընթացը 2010–2023 թթ., մլն դրամ³¹

Արդյունաբերության ոլորտի մյուս՝ համախառն արդյունաբերական արտադրանքում համեմատաբար ավելի փոքր կշիռ ունեցող ճյուղերում (էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարման և ջրամատակարարման, կոյուղու, թափոնների կառավարման և վերամշակման) վերջին տարիներին կտրուկ տատանումներ տեղի չեն ունեցել: Կտրուկ աճ է գրանցվել էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարման ճյուղում 2011 թ.՝ 42.6%՝ պայմանավորված էլեկտրաէներգիայի արտադրության 53.7% աճով. այնուհետև աճը դանդաղել է:

2023 թ. առաջին կիսամյակում էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարման ճյուղի աճը նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի նկատմամբ կազմել է 0.2%: Դանդաղ աճի պատճառ է գազամատակարարման համակարգի միջոցով բաշխվող գազի վաճառքի 3.4%-ով կրճատումը: Միևնույն ժամանակ, 2023 թ. առաջին կիսամյակում 8.6% աճ է գրանցվել ջրամատակարարման, կոյուղու, թափոնների կառավարման և վերամշակման ճյուղում՝ մեծապես պայմանավորված թափոնների հավաքման, մշակման, ոչնչացման, վնասազերծման և նյութերի վերականգնման ճյուղի 23.9% աճով և ջրի հավաքման, մշակման և բաշխման ճյուղի 7.4% աճով:

³¹ Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք - 2015, էջ 252-254: Հայաստանի վիճակագրական տարեգիրք - 2016, էջ 255-257: Հայաստանի վիճակագրական տարեգիրք - 2020, էջ 295-297: Հայաստանի վիճակագրական տարեգիրք - 2022, էջ 310-312: Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2022 թվականի հունվար-դեկտեմբերին, էջ 11-12: Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2023 թվականի հունվար-հուլիսին, էջ 30:




Գծապատկեր 12. Էլեկտրաէներգիայի արտադրության կառուցվածքն ըստ կայանների, %³²

Էներգետիկայի ոլորտում էլեկտրաէներգիայի արտադրությունը, հիմնականում, ապահովվել է ջերմային կայանների հաշվին՝ միջինում 38.4%, 31.9%-ն ապահովվել է ատոմային կայանի, իսկ 29.2%-ը՝ հիդրոէլեկտրակայանների հաշվին: 2020 թ. սկսած՝ աճել է այլ աղբյուրներից էլեկտրաէներգիայի արտադրությունը: Մասնավորապես՝ 2021 թ., նախորդ տարվա համեմատությամբ, արևային էլեկտրակայաններից էլեկտրաէներգիայի արտադրությունն աճել է 4.2 անգամ, 2022 թ.՝ 2.7 անգամ, իսկ 2023 թ. հունվար-հունիսին, նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի նկատմամբ, արևային կայանների արտադրության աճը կազմել է շուրջ 80%: 2023 թ. հունվար-հուլիսին արևային էլեկտրակայաններից արտադրության ծավալը կազմել է 448.6 կՎտ ժամ, իսկ 2022 թ. նույն ժամանակահատվածում՝ 128.8 կՎտ ժամ³³:

Անդրադառնալով արդյունաբերության ոլորտում իրականացված ներդրումներին՝ անհրաժեշտ է ընդգծել այն փաստը, որ օտարերկրյա ներդրումները հոսում են դեպի բարձր շահութաբերությամբ ոլորտներ: Արդյունաբերության ոլորտը 2014–2022 թթ., միջին հաշվով, կլանել է օտարերկրյա ուղղակի ներդրումների 85%-ը: Ընդ որում, ներգրավված ներդրումների միջինում 65.6%-ը բաժին է ընկել էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարման ճյուղին, իսկ 13.8%-ը՝ հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման ճյուղին:

³² Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք - 2015, էջ 281: Հայաստանի վիճակագրական տարեգիրք - 2016, էջ 285: Հայաստանի վիճակագրական տարեգիրք - 2020, էջ 333: Հայաստանի վիճակագրական տարեգիրք - 2022, էջ 341: Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2022 թվականի հունվար-դեկտեմբերին, էջ 22: Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2023 թվականի հունվար-հուլիսին, էջ 34, 39:


³³ 2023 թ. հունվար-հուլիս ամիսների ցուցանիշները համադրելի չեն նախորդ տարվա համանուն ցուցանիշների հետ՝ կապված 2022 թ. հունվար-հուլիս ամիսների ցուցանիշներում էլեկտրաէներգիայի փոխհոսքերի մասով ինքնավար արտադրողների կողմից արտադրված էլեկտրաէներգիայի ծավալների բացակայությամբ:



Գծապատկեր 13. Արդյունաբերության ոլորտում կապարված օտարերկրյա ուղղակի ներդրումների կառուցվածքը, 2014–2022 %³⁴

Ներգրավված ներդրումները մեծ մասամբ ուղղվում են էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարման և հանքարդյունաբերության ճյուղեր, որտեղ մշակող արդյունաբերության համեմատությամբ ավելի փոքր ծավալի ավելացված արժեք է ստեղծվում: Մշակող արդյունաբերության ճյուղում օտարերկրյա ուղղակի ներդրումները, հիմնականում, հոսում են դեպի խմիչքի և ավելի նվազ չափով՝ էլեկտրական սարքավորանքի արտադրության ճյուղեր:

Այս համատեքստում կարևոր է անդրադառնալ զբաղվածությանը, որը 2010–2021 թթ. ժամանակահատվածում արդյունաբերության ոլորտում գրեթե չի փոխվել՝ կազմելով, միջին հաշվով, 12.3%:




Գծապատկեր 14. Զբաղվածներն ըստ տնտեսական գործունեության տեսակների, %³⁵

³⁴ Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ կայքէջ, Վիճակագրական տվյալների բազաներ, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2023 թվականի հունվար-փետրվարին, էջ 122-125:

Ներդրումների ներհոսքի հաշվարկները կատարել են հեղինակները:

³⁵ Տե՛ս ՀՀ ՎԿ կայքէջ, Հայաստանի վիճակագրական տարեգիրք - 2014, էջ 60-62: Հայաստանի վիճակագրական տարեգիրք - 2016, էջ 60-62: Հայաստանի վիճակագրական տարեգիրք -

Ոլորտում զբաղվածները կենտրոնացած են առավելապես մշակող արդյունաբերության ենթաօլորտում, որը 2010–2021 թթ. կազմել է արդյունաբերությունում զբաղվածների 69.6%-ը, իսկ ընդհանուր զբաղվածների մոտ 8.6%-ը:



Գծապատկեր 15. Միջին ամսական անվանական աշխատավարձը արդյունաբերական ոլորտում, դրամ³⁶

Զբաղվածության ոլորտային բաշխվածության մեջ անհրաժեշտ է դիտարկել նաև միջին ամսական աշխատավարձերի մակարդակը: Արդյունաբերության ճյուղում ամենաբարձր միջին ամսական աշխատավարձը տրվում է հանքարդյունաբերության ոլորտում զբաղվածներին, այնուհետև էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարման ոլորտի աշխատողներին:

2010–2012 թթ. հանքագործական արդյունաբերության ոլորտում աշխատավարձը կազմել է, միջին հաշվով, 247,413 դրամ, 2013–2017 թթ.՝ 353,144 դրամ՝ նշված նախորդ ժամանակաշրջանի համեմատությամբ աճելով 42.7%-ով: Իսկ արդեն 2018–2022 թթ. այս ոլորտում միջին ամսական աշխատավարձի մակարդակը հասել է 463,726 դրամի՝ 2013–2017 թթ. համեմատությամբ աճելով 31.3%-ով:

Մշակող արդյունաբերության ոլորտում 2010–2012 թթ. միջին ամսական անվանական աշխատավարձը միջինում կազմել է 111,589 դրամ, 2013–2017 թթ.՝ 149,593 դրամ, իսկ 2018–2022 թթ.՝ 173,598 դրամ:

Արդյունաբերության մյուս երկու ոլորտներում աշխատավարձի առումով էական տեղաշարժեր չեն եղել, արդյունքում՝ 2010–2022 թթ. միջին ամսական անվանական աշխատավարձը էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարման ոլորտում միջինում կազմել է 225,406 դրամ,

2018, էջ 64-66: Հայաստանի վիճակագրական տարեգիրք - 2020, էջ 81-84: Հայաստանի վիճակագրական տարեգիրք - 2022, էջ 88-94:
³⁶ Տե՛ս ՀՀ ՎԿ կայքէջ, Հայաստանի վիճակագրական տարեգիրք - 2013, էջ 89: Հայաստանի վիճակագրական տարեգիրք - 2014, էջ 87: Հայաստանի վիճակագրական տարեգիրք - 2016, էջ 87: Հայաստանի վիճակագրական տարեգիրք - 2018, էջ 91: Հայաստանի վիճակագրական տարեգիրք - 2020, էջ 115: Հայաստանի վիճակագրական տարեգիրք - 2022, էջ 124: ՀՀ ՎԿ կայքէջ, Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը 2023 թվականի հունվարին, էջ 88: Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը 2023 թվականի հունվար-հուլիսին, էջ 83:

իսկ ջրամատակարարման, կոյուղու, թափոնների կառավարման և վերամշակման ոլորտում՝ 155,400 դրամ:

Եզրակացություններ

Տնտեսության իրական հատվածում առկա են եղել մի շարք խնդիրներ, որոնք էլ հանգեցրել են տնտեսության կառուցվածքային փոփոխությունների: Մասնավորապես՝ իրական հատվածում տեղի են ունեցել կառուցվածքային վերափոխումներ, արտահանման կառուցվածքում գերակշռել են ցածր որակավորում ունեցող աշխատուժի արտադրած ապրանքները:

ՀՀ արդյունաբերության ոլորտը վերջին մեկուկես տասնամյակում որակական առումով բացասական փոփոխություններ է կրել: Դա հատկապես վերաբերում է ոլորտի բազմազանեցվածության նվազմանը, մեծ ավելացված արժեք ստեղծող ենթաոլորտների և արտադրությունների էական կրճատմանը: Ճիշտ է, 2019 թ. արդյունաբերության տեխնոլոգիական խորությունը և արդիականացումը ներկայացնող համաթվերի գծով որոշ դրական փոփոխություններ արձանագրվել են, այդուհանդերձ, լուրջ որակական փոփոխություններ դեռևս չկան:

Հանքահումքային արդյունաբերությունը ՀՀ տնտեսության կարևոր հենասյուներից է՝ հատկապես արտահանման, պետական բյուջեի հարկային մուտքերի ապահովման և զբաղվածության տեսանկյունից: Այս ոլորտի զարգացման դինամիկայի վրա ազդող էական գործոններից են մետաղների համաշխարհային գները:

ՀՀ մշակող արդյունաբերությունը բավական խոցելի է կառուցվածքի առումով, քանի որ դրա մեկ երրորդից ավելին ապահովում է սննդի արդյունաբերությունը: Մշակող արդյունաբերության ավելացված արժեքի մեջ փոքր է բարձրտեխնոլոգիական արտադրությունների մասնաբաժինը, իսկ էլեկտրական սարքավորումների արտադրությունն ապահովում է մշակող արդյունաբերության առավելագույնը 1%-ը: Ոլորտի տեխնիկական վերազինման և արդիական տեխնոլոգիաների ներդրման ներկայիս մակարդակը խոչընդոտում է արդյունաբերական ոլորտի արտադրողականության բարձրացումը:

Արդյունաբերության որոշ ենթաոլորտներում արտադրված ապրանքների ծավալներն էապես զիջում են արտահանման ծավալներին: Էական շեղումներ կան հատկապես «համակարգիչների, էլեկտրոնային և օպտիկական սարքավորանքի արտադրություն», «հիմնային մետաղների արտադրություն», «ավտոմեքենաների արտադրություն» ապրանքախմբերի գծով: Դրանց արտադրության, արտահանման ու ներմուծման վիճակագրությունը վկայում է 2022–2023 թթ. գրանցված վերաարտահանման մեծ ծավալների մասին:

Օգտագործված գրականություն

1. Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության հնգանիշ դասակարգման, հունվար–դեկտեմբեր, 2006–2022 թթ.:
2. Հանրապետական երկրաբանական ֆոնդի կայքէջ, <https://www.geo-fund.am/hy/>
3. Արժույթի միջազգային հիմնադրամի կայքէջ, հումքային ապրանքների գներ, տարեկան տվյալներ, <https://www.imf.org/en/Research/commodity-prices>
4. Համաշխարհային բանկի կայքէջ, «Հանքարդյունաբերության ոլորտի կայունության ռազմավարական գնահատում. Հայաստան», ապրիլ, 2016, https://www.eiti.am/file_manager/Useful%20materials/StrategicArm.pdf
5. Համաշխարհային բանկի կայքէջ, Ապրանքային շուկաներ, Ապրանքների գներ, <https://www.worldbank.org/en/research/commodity-markets>
6. ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2013 թ. սեպտեմբերի 19-ի N 874-Ն հրաման, հավելված:
7. ՀՀ ՊԵԿ-ի կայքէջ, Հարկ վճարողների վերաբերյալ տեղեկատվական ցանկեր, <https://www.petekamutner.am/Content.aspx?itn=tsTILists>
8. ՀՀ ՊԵԿ-ի կայքէջ, Մետաղական օգտակար հանածոյի արտահանման թույլտվություն ստացած ընդերքօգտագործող հարկ վճարողների արտահանած ապրանքների ցանկ, 2021, <https://www.petekamutner.am/Content.aspx?itn=tsTILists>
9. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2022 թվականի հունվար-դեկտեմբերին:
10. ՀՀ ՎԿ արտաքին տվյալների բազա (ըստ ապրանքային անվանացուցակի 4-նիշ դասակարգման), 2006–2022 թթ.:
11. ՀՀ ՎԿ, Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը 2023 թվականի հունվարին:
12. ՀՀ ՎԿ, Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը 2023 թվականի հունվար-հուլիսին:
13. ՀՀ ՎԿ, Հայաստանի վիճակագրական տարեգրքեր՝ 2013, 2014, 2016, 2018, 2020, 2022:
14. ՀՀ ՎԿ կայքէջ, Վիճակագրական տվյալների բազաներ:
15. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կայքէջ, Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն (ԱՃԹՆ), Մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման պայմանագրեր, <https://mtad.am/pages/extractive-industries-transparency-initiative>
16. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կայքէջ, Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն (ԱՃԹՆ), Մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման մասով գործունեության վերաբերյալ տեղեկատվություն, <https://www.mtad.am/pages/extractive-industries-transparency-initiative?tab=1>

17. Սոցիալ-տնտեսական ուսումնասիրությունների հայկական կենտրոն, Հայաստանի արդյունաբերության «ստազնացիա» դիագնոստիկան, 2023 թ., <https://www.acses.am/ardyunaberutyansnagnacian/>
18. Динамика структуры промышленности Республики Армения в контексте членства в ЕАЭС, <https://rep.bntu.by/bitstream/handle/data/75461/230-232.pdf?sequence=1&isAllowed=y>
19. Сафарян А., О промышленной политике современной Армении, 2019, <https://armenpress.am/rus/news/985763.html>
20. Сырьевые и несырьевые отрасли Армении: промышленность, экспорт, ВВП, <https://www.kavkaz-uzel.eu/blogs/83781/posts/34748>
21. Тевикян А., Промышленное производство Армении, <https://rb.gy/sg1vl>
22. International Council on Mining and Metals, Role of Mining in National Economies, Mining Contribution Index (MCI), 6th Edition, December 2022, https://www.icmm.com/website/publications/pdfs/social-performance/2022/research_mci-6-ed.pdf?cb=16134
23. International Council on Mining and Metals, Role of Mining in National Economies, Mining Contribution Index 2020, 5th Edition, https://www.icmm.com/website/publications/pdfs/social-performance/2020/research_mci-5.pdf
24. The International Standard Industrial Classification of All Economic Activities (ISIC), Rev.4, Statistical Papers, Series M No. 4/Rev.4, United Nations, New York, 2008, <https://unstats.un.org/unsd/publications/catalogue?selectID=396>
<https://www.ecolur.org/hy/news/mining/12962/>

ՏՕՏ ԽԱՇԻԿՅԱՆ

*Заведующий кафедрой макроэкономики АГЭУ,
кандидат экономических наук, доцент*

ԳԱՅԱՆԵ ԱՎԱԳՅԱՆ

*Доцент кафедры макроэкономики АГЭУ,
кандидат экономических наук*

ԿՆԱՐԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

*Доцент кафедры макроэкономики АГЭУ,
кандидат экономических наук*

ԱԻԴԱ ՄԻՐՈՒՄՅԱՆ

Аспирант кафедры макроэкономики АГЭУ

Тенденции развития промышленности РА и анализ структурных сдвигов. – Промышленность является лидером и определяющим фактором экономики, а уровень развития любой страны определяется ее развитием. Приоритет промышленности определяется ролью в обеспечении жизнеспособности экономической системы, экономического развития, обороноспособности страны и экономической безопас-

ности. Изучение тенденций развития и структурных сдвигов промышленного сектора РА в 2010-2022 гг. особенно важно в этот экономический и политический период. В статье изучена динамика показателей промышленного сектора РА особенно за последнее десятилетие, выявлены факторы, определяющие структурные изменения отрасли и причины низкой экономической эффективности. Проведен анализ динамики показателей промышленного производства по внешним и внутренним факторам, влияющим на показатели, что позволило выявить основные проблемы и дать качественные оценки, характеризующие текущее состояние отрасли.

Важной составляющей работы является общее исследование инвестиционного поля в отрасли, в результате которого были выявлены отдельные особенности. Взаимосвязь инвестиционных особенностей и развития отрасли дает основание сделать ряд выводов относительно повышения производительности промышленного сектора РА.

В рамках исследования были затронуты вопросы устойчивого развития в той мере, в какой тема касается увеличения объемов производства электроэнергии и экологического сектора.

В целом предпринята попытка представить комплексный анализ структурных сдвигов в отрасли индустрии РА, что позволит исследователям быстро сориентироваться в рамках основных направлений.

Ключевые слова: *производительность, структурные изменения, горнодобывающая промышленность, обрабатывающая промышленность*

JEL: L16, L72

DOI: 10.52174/29538114_2023.3-7

SOS KHACHIKYAN

*Head of the Chair of Macroeconomics, ASUE,
PhD in Economics, Associate Professor*

GAYANE AVAGYAN

*Associate Professor at the Chair of Macroeconomics, ASUE,
PhD in Economics*

KNARIK VARDANYAN

*Associate Professor at the Chair of Macroeconomics, ASUE,
PhD in Economics*

AIDA MIRUMYAN

PhD student at the Chair of Macroeconomics, ASUE

Industry Development Trends in the Republic of Armenia and Analysis of Structural Changes.– Industry is the leader of the economy and its determining factor, and the level

of development of any country is described by the development of industry. The priority of industry is determined by the role in ensuring the viability of the economic system, economic development, defense of the country and economic security. The study of development trends and structural changes within the industrial sector of the Republic of Armenia from 2010 to 2022 holds particular significance in the current economic and political period. The paper examines the dynamics of indicators of the industrial sector of the Republic of Armenia, especially over the last decade, identifying the factors determining structural changes in the industry and the reasons for low economic efficiency. An analysis of the dynamics of industrial production indicators was carried out based on external and internal factors, making it possible to identify the main problems and provide qualitative assessments characterizing the present state of the industry.

An important component of the work is the general study of the investment field in the industry, as a result of which certain features were revealed. The interdependence of investment

features and the development of the sector provides a basis for making a number of conclusions regarding the increase in the productivity of the RA industrial sector.

The study addressed sustainable development issues focusing on the increase in the volume of electricity production and the environmental sector.

In general, an attempt has been made to present a comprehensive analysis of the structural shifts in the RA industry, which will enable researchers to quickly orient themselves within the framework of the main directions.

Keywords: *productivity, structural change, mining, manufacturing*

JEL: L16, L72

DOI: 10.52174/29538114_2023.3-7